

5.3. 2012 թվականի մայիս ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, մայիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1.5-3 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երկրորդ տասնօրյակներում եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմային մոտ մի փոքր դրական և բացասական շեղումներով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +17 +21°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +13 +18°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +11 +15°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +9 +13°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մայիսի 30-31-ին: Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +30 +34°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +24 +28°C, ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +20 +25°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում կազմել է +3 +7°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +5 +9°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +8 +13°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +11 +15°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մայիսի 1-2-ին: ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում գրանցվել է 0 +5°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -1°C, Մեծ Մասրիկ գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -2°C), Սյունիքի նախալեռներում՝ +1 +6°C, ՀՀ Տավուշի մարզում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +6 +10°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ +3°C):

Ամսական տեղումների քանակը եղել է նորմայից ցածր: ՀՀ Կոտայքի և Շիրակի մարզերում այն կազմել է նորմայի 67-121%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 40-108%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 55-91%, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 101-164%, Արարատյան դաշտավայրում՝ 32-90% (ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 156%), ՀՀ Սյունիքի մարզում՝ 96-140%:

Մայիսի 3-ին, 8-12-ին, 14-18-ին, 20-ին և 27-31-ին առանձին վայրերում, 4-7-ին, 13-ին և 21-26-ին տարածաշրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Մայիսի 6-ին, 8-ին, 11-12-ին, 18-19-ին և 25-28-ին առանձին կայաններում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Մայիսի 8-9-ին, 13-14-ին, 17-20-ին և 20-28-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-16 մ/վրկ, պոռթկումները՝ 16-25 մ/վրկ: Մայիսի 5-6-ին, 8-9-ին, 12-14-ին, 17-ին, 21-22-ին, 24-ին և 29-31-ին առանձին կայաններում դիտվել է կարկուտ 0.2-2 սմ տրամագծով:

Մայիսի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) կազմել է 24 սմ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 50-90%-ը, Մասրիկ, Ծովակ, Ագատ, Գառնի, Վեդի և Ուրցաձոր գետերում՝ մինչև 130%:

Սևանա լճի մակարդակն մայիս ամսվա ընթացքում բարձրացել է 13 սմ-ով և մայիսի 31-ի դրությամբ կազմել 1900.45 մ, որը 2011թ. նույն օրվա համեմատ բարձր է 9 սմ-ով, լճից բաց թողնված ջրի քանակը կազմել է 42.649 մլն. խոր. մ: